Մեղրի

Հեռավորությունը Երևան քաղաքից՝ 376 կմ
Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 84 կմ
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 610 մ
Մեղրին գտնվում է Հայաստանի Հանրապետության Հարավ-արևելյան տարածքում: Այն Սյունիքի մարզի հարավային սահմանապահ քաղաքներից է, որը տարածված է Մեղրի գետի աջ և ձախ ափերին, որոնք կոչվում են Մեծ և Փոքր թաղեր: Քաղաքը պետական սահմանով և մայր Արաքս գետով բաժանվում է Իրանի Իսլամական Հանրապետությունից: Քաղաքի կլիման չոր և մերձարևադարձային է: Այստեղից է սկսվում Հայաստանի գարունը, իսկ աշունը ամենաուշն է հրաժեշտ տալիս: Ամառը այստեղ շոգ է, իսկ ձմեռը՝ ոչ ձյունառատ:
Համառոտ պատմական ակնարկ
Մեղրին՝ Գողթան աշխարհի նախկին «Արևիք» գավառը, հիշատակվում է դեռևս նախնադարից: Պատմական քառաղիներում Մեղրին ժամանակ առ ժամանակ հայտնվել է թուրք –սելջուկների, մոնղոլ թաթարների ասպատակությունների տակ, բայց միշտ մնացել է անսասան:
1828թ. Մեղրին ընդգրկված է եղել Ղարաբաղի պրովինցիայի մեջ, իսկ 1868 թ-ին կազմել է Ելիզավետապոլի նահանգի Զանգեզուր գավառի մի մասը: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1930 թվականի սեպտեմբերի 9-ին կազմավորվել է Մեղրու շրջանը՝ Մեղրի կենտրոնով: Մեղրիի մշակութային կյանքի, կենցաղավարության վրա մեծ ազդեցություն է թողել Ագուլիսի սոցիալ-մշակութային կյանքը:
1901թ. Հայաստանում 1-ինը այստեղ բացվել է սպառողական կոոպերացիա:
1881թ. արտասահմանում ուսանած մի խումբ մեղրեցի երիտասարդների նախաձեռնությամբ, համագյուղացիների համագործակցությամբ Մեղրի գյուղում բացվել է երկսեռ ծխական դպրոց: Ներկայումս քաղաքում գործում է 2 միջնակարգ դպրոց:
2001 թվականին քաղաքում բացվել է միջնակարգ մասնագիտական 1-ին հաստատությունը՝ Մեղրու պետական քոլեջը, որտեղ որակավորում են ստանում ապագա դասվարներ, հաշվապահները և ավտովարորդները: Համայնքային ենթակայությամբ գործում են 1 մանկապարտեզ, 1 մարզադպրոց, 1 արվեստի մանկական դպրոց և գրադարանային համակարգ: Ի դեպ, Մեղրու գրադարանը 2012 թվականին բոլորել է իր գոյության 130 ամյակը: Համայնքն ունի մշակույթի կենտրոն, որտեղ գործում են ինքնագործ խմբեր: 1985 թվականին Մեղրիում գործում է նաև Երևանի գեղագիտական դաստիարակության Մեղրիի մասնաճյուղը, որի շենքում տեղակայված է նաև թանգարան:
Քաղաքի Ադելյան փողոցում, մշակույթի պալատի հարևանությամբ է գտնվում մարզադաշտը և 2 լողավազան:
Բնակչության առողջության պահպանությամբ զբաղվում է "Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն" ՓԲԸ – ն:
Երբեմնի գյուղ, հետո ավան Մեղրի բնակավայրը 1984 թվականից է ստացել քաղաքի կարգավիճակ:
Տնտեսություն
Մեղրեցին եղել է տոհմիկ պտղագործ ու այգեգործ: Այստեղ աճում են անուշաբույր և քաղցրահամ մրգեր: Վերջին տարիներին թուզ, նուռ, սերկևիլ, խաղող, դեղձ մրգատեսակներին ավելացել են մերձարևադարձային կուլտուրաներ՝ արքայանարինջ, կիվի, զեյթուն և այլն:
Ներկայումս քաղաքում գործում են պահածոների և գինու գործարաններ:
Շինարարական կազմակերպություններից աշխատում է միայն «Մեղրու ճանշին ձեռնարկություն» ՍՊԸ-ն :
Հնամենի ամֆիթատրոնի տեսք ունեցող քաղաքին առանձին հմայք են տալիս լեռնագագաթներին

բազմած 11-րդ դարի կառույց՝ Մեղրու 6 բերդերը /բուրջեր/, դարավոր չինարիների պուրակը և 17-րդ դարի կառույցներ Ս. Մարիամ Աստվածածին, Ս. Հովհաննես, Սարգիս եկեղեցիները և Անապաստանաց վանքը։
Եկեղեցու որմնանկարները պատկանում են Նաղաշ Հովնաթան դպրոցին։ Մեղրին մայրաքաղաք Երևանի և Հայաստանի մարզերի հետ հաղորդակցվում է միայն ավտոտրանսպորտով։ Քաղաքի տարածքով է անցնում Իրան-Հայաստան միջպետական ավտոմայրուղին։
2008 թվականի դեկտեմբերից Մեղրին բարեկամական, տնտեսական, մշակութային կապերով համագործակցում է Բելոռուսի հանրապետության Մյադել քաղաքի հետ։

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3201հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1856 հա, որից՝
- վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 78 հա, խոտհարք՝ 2 հա, այլ հողատեսք՝1699 հա
- բնակավայրերի հողեր՝ 223 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 105 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝18 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 906 հա,
- հատուկ նշանակության հողեր՝ 76 հա,
- ջրային հողեր՝ 18 հա